

---

---

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՎ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Հայ բարբառագիտության մեջ, սկսած Հր. Աճառյանից<sup>1</sup>, Բայազետի բարբառային միավորը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ: Հարցն այդ տեսանկյունով են դիտարկել նաև Ա. Ղարիբյանը<sup>2</sup>, Ա. Գրիգորյանը<sup>3</sup>, Ռ. Բաղրամյանը<sup>4</sup>: Նման մեկնաբանությունը պայմանավորված է եղել բարբառ ու ենթաբարբառ իրողությունները միմյանցից տարբերակելու լեզվական հստակ չափանիշների բացակայությամբ: Ըստ Ա. Գրիգորյանի՝ «Բարբառի և ենթաբարբառի տարբերությունն այնքան էլ մեծ չի լինում: Մովորաբար ընդունված է ասել, որ այն դեպքում, երբ խոսողներն իրար չեն հասկանում կամ հասկանում են շատ մեծ դժվարությամբ, այդ դեպքում ունենում ենք բարբառներ, իսկ այն դեպքում, երբ խոսողները միմյանց հասկանում են առանց դժվարության, այդ դեպքում ունենում ենք ենթաբարբառներ:

Ենթաբարբառն իր բառապաշարով, բառակազմական և հնչյունական օրենքներով և քերականական կառուցվածքով շատ ավելի մոտ է այն բարբառին, որի ճյուղավորումն է, քան երկու տարբեր բարբառներ: Այս նշանակում է, որ, օրինակ՝ Բայազեդի ենթաբարբառն ավելի է մոտ Արարատյան բարբառին, քան վերջինս, ասենք, Ագուլիսի բարբառին»<sup>5</sup>: Այս սկզբունքի անկատարությունը նկատի ունենալով՝ Ա. Ղարիբյանը գրում է. «Մինչև այժմ բարբառագիտության մեջ սահմանված չեն որոշակի նորմաներ հայերեն բարբառն ու ենթաբարբառը միմյանցից տարբերելու համար: .... Հ. Աճառյանի մոտ ենթաբարբառ կոչված շատ խոսվածքներ կարելի է, առանց գիտության դեմ մեղանչելու, առանձնացնել որպես անկախ բարբառներ»<sup>6</sup>: Լեզվաբանը գտնում է, որ «Որևէ խոսվածք անկախ բարբառ համարվելու համար պետք է ավելի լուրջ

---

<sup>1</sup> Հր. Աճ ա ռ յ ա ն. Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 44-45, 48:

<sup>2</sup> Ա. Ղ ա թ ի բ յ ա ն. Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 227:

<sup>3</sup> Ա. Գ ռ ի գ ռ յ ա ն. Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, էջ 224-225:

<sup>4</sup> Ռ. Բ ա ղ թ ա մ յ ա ն. Հայերեն բարբառներ, Երևան, 1972, էջ 11-12:

<sup>5</sup> Ա. Գ ռ ի գ ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 10:

<sup>6</sup> Ա. Ղ ա թ ի բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 85:

տարբերություններ ունենա, ավելի ճիշտ՝ պետք է տարբերությունների մի ամբողջ կոմպլեքս ունենա»<sup>7</sup>: Ա. Ղարիբյանն առաջարկում է բարբառները որոշելիս հիմք ընդունել իր կողմից սկզբունքային համարված 12 հնչյունաբանական և ձևաբանական տարբերություններ կամ հատկանիշներ և ապա եզրակացնում է. «Այս 12 հատկանիշներից մի խումբ հատկանիշներով (հնչյունական և ձևաբանական) միմյանցից տարբերվող խոսվածքները ազատ կերպով կարելի է դիտել իբրև առանձին բարբառներ»<sup>8</sup>: Իհարկե, այս դեպքում ևս չափանիշները որոշակի չեն դառնում, որովհետև չեն բացատրվում սկզբունքային համարված 12 հատկանիշների ընտրության հիմքերը, դրանց նշված քանակությունը, պարզ չէ նաև, թե քանի տարբերակիչ հատկանիշների առկայությունն է բավարար որևէ բարբառ առանձնացնելու համար: Սակայն, փաստորեն, հայ բարբառագիտության մեջ Ա. Ղարիբյանի կողմից առաջ է քաշվում այն գաղափարը, որ բարբառները որոշելիս պետք է հաշվի առնել հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների համախումբ, և, թերևս, այս գաղափարի հետագա զարգացումն ու գործադրումն էր Գ. Ջահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, համաձայն որի՝ հնչյունաբանական և ձևաբանական 100 հատկանիշների շրջանակներում մինչև 22 տարբերակիչ հատկանիշ ունեցող բարբառային միավորները նույն բարբառի խոսվածք են, իսկ 22,5 և ավելի տարբերիչ հատկանիշների դեպքում գործ ունենք առանձին բարբառների հետ<sup>9</sup>: Ահա այսպիսի դասակարգման միջոցով էլ Գ. Ջահուկյանն առաջին անգամ հայ լեզվաբանության մեջ Բայագետի բարբառային միավորը դիտարկում է ոչ թե իբրև Արարատյան բարբառի ենթաբարբառ, այլ իբրև ինքնուրույն բարբառ, որը Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Աստրախանի, Արդվին – Թբիլիսիի բարբառների հետ մաս է կազմում հայ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի<sup>10</sup>: Նկատենք, որ եթե Աճառյանը Բայագետի բարբառային միավորը Արարատյան բարբառի շրջանակներում զատում էր տարբերակիչ ութ հատկանիշներով, իսկ Ա. Ղարիբյանը դրանց ավելացնում էր ևս մեկը, ապա Գ. Ջահուկյանի բերած աղյուսակները վկայում են<sup>11</sup>, որ Արարատյան բարբառի խոսվածքներից Բայագետի բարբառը տարբերվում է երկուսուկես տասնյակից ավելի հատկանիշներով: Օրինակ, այդ խոսվածքների մի մասի տարբերությունները Բայագետի բարբառից ունեն քանակական հետևյալ արտա-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>9</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 127:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 51 – 119:

հայտնությունը. Երևան և Աշտարակ՝ 26,5 - ական, Էջմիածին՝ 28, Քանաքեռ, Աստապատ և Ղալաչա՝ 29,5 - ական, Գյառգյառ՝ 31,5: Ի դեպ, Արարատյան և Բայազետի բարբառների միջև առկա են էական մի շարք այլ տարբերություններ, որոնք Գ. Ջահուկյանի բերած հարյուր հատկանիշների մեջ ընդգրկված չեն, բացի այդ՝ որոշ դեպքերում լեզվաբանի ունեցած տվյալները ճշգրտման կարիք ունեն: Հասկանալի է, որ եղած տարբերություններին գումարվում են նաև բառապաշարային ու շարահյուսական զանազանություններ, որոնք ևս կարևոր դեր ունեն բարբառները առանձնացնելիս:

Հիմք ընդունելով Արարատյան և Բայազետի բարբառներում բարբառային հատկանիշների դրսևորումների՝ Գ. Ջահուկյանի բերած տվյալները, Արարատյան բարբառում ուսումնասիրողների արձանագրած լեզվական փաստերը և Բայազետի բարբառի վերաբերյալ մեր դիտարկումները՝ ցույց տանք Արարատյան ու Բայազետի բարբառների հիմնական և էական տարբերությունները՝ այդպիսով ներկայացնելով բարբառային այս երկու միավորների իրական փոխհարաբերությունները:

Դիտարկվող բարբառները ձայնավորական համակարգում ունեն հետևյալ տարբերությունները.

1(46)<sup>12</sup>. Ի տարբերություն Արարատյան բարբառի՝ Բայազետի բարբառն ունի շրթնայնացած *ւ* ձայնավոր, որը հանդես է գալիս իբրև ա հնչույթի դիրքային տարբերակ: Այս հատկանիշով, կարելի է ասել, Բայազետի բարբառն առանձնանում է ոչ միայն Արարատյան բարբառից, այլ նաև հայերենի մյուս բոլոր բարբառներից:

2(35). Արարատյան բարբառը չունի քմայնացած *ա0* ձայնավոր<sup>13</sup>, մինչդեռ Բայազետի բարբառում այդ հնչունը հանդիպում է ոչ միայն փոխառյալ, այլ նաև բնիկ շատ բառերում՝ առանց դիրքային պայմանավորվածության (օր.՝ *հււշկ*, *զււրււս*, *դււնւնկ*, *ձււք*, *թււզււս*, *միյնւնկ*, *օրինւնկ*, *փէւսւս*, *լււց*, *քււրի*, *զււնեկ*, *զււտիկ*, *ժււնգ*, *ժււժիկ* և այլն), և ունի հնչույթի արժեք (հմմտ. *թառ* - *թււռ*, *թաթ* - *թււթ*, *թալ* - *թււլ*, *լալ* - *լււլ*, *քար* - *քււր* և այլն):

3(30). Բայազետի բարբառում շեշտակիր *ե* - *ն* ունի բարձրացող - երկբարբառային արտասանություն (~իէ), մինչդեռ Արարատյան բարբառին երկբարբառային հնչունները բնորոշ չեն<sup>14</sup>:

<sup>12</sup> Փակագծերում նշում ենք հատկանիշի համարը Գ. Ջահուկյանի աղյուսակում, եթե այն ընդգրկված է:

<sup>13</sup> Տե՛ս Ա. Ղ ա ր ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 108, 220-221. Ա. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 206:

<sup>14</sup> Ա. Ղ ա ր ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 220, Ա. Գ ր ի գ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 206:

4(31). Արարատյան բարբառին բնորոշ չէ նաև երկբարբառային ո-ն, իսկ Բայազետի բարբառի շեշտակիր վանկում ո-ն ունի ուս արտասանություն (բ՛ոց, գ՛ող, թոդ, խոտ, կըտոր, խընձոր, սըխտոր):

5(27). Եթե ույ-ի դիմաց Արարատյան բարբառն ունի ի (գրույց - գրից, լույս - լիս, քույր - քիր), ապա Բայազետի բարբառն ունի ու (լույս - լուս, քույր - քուր, բույն - բ՛ուն, թույլ - թուլ):

6(28). Եթե յու-ի դիմաց Արարատյան բարբառն ունի ի (այյուր - ալիւր, ձյուն - ձին, արյուն - արին), ապա Բայազետի բարբառն ունի ու (այյուր - ւյ լուր, արյուն - ւյ բուն, ձյուն - ձ՛ուն):

7(48). Ըստ Գ. Ջահուկյանի<sup>15</sup>՝ թե՛ Արարատյան, թե՛ Բայազետի բարբառներին հատուկ է միջին շարքի ձայնավորների վերջավանկային շեշտակրություն ոչ բնաձայն բառերում (գրրում - գրրը՛ւմ, գրնում - գրնը՛ւմ): Իրականում Բայազետի բարբառին այս իրողությունն անձանորթ է. այստեղ գրրըւմ, գրնըւմ ձևեր ընդհանրապես չեն հանդիպում:

8(49). Արարատյան բարբառին բնորոշ է վերջընթեր վանկի շեշտակրությունը, իսկ Բայազետի բարբառում շեշտակիր է վերջին վանկը:

9. Բայազետի բարբառին արևմտյան բարբառների պես բնորոշ են բազմավանկ բառերի բառամիջի ձայնավորի պատմական փոփոխությունները (օր.՝ բաժանել - բ՛աժնել, հավաքել - հավքել, ժողովել - ժողվել, սովորել - սօրվել, ոլորել - օլրրել, ողողել - օղղղել, ամաչել - ւմ մչրնալ, քառասուն - քառսուն, երեսուն - յեսսուն, հայելի - խւնյլի). Արարատյան բարբառում նման փոփոխություններ չեն կատարվել շեշտի վերջընթեր դիրքի պատճառով:

10. Ե՛վ Արարատյան, և՛ Բայազետի բարբառներում շեշտափոխական հնչյունափոխության նույն օրինաչափություններն են գործում, ինչ գրական հայերենում: Բայազետի բարբառում, սակայն, շեշտից գրկվելով, կարող են սղվել բոլոր ձայնավորները (օր.՝ հեժան - հեժննալ, հարեվան - հարեվնի, գ՛երան - գ՛երնի, դ՛ւնննկ - դ՛ւննկի, ջ՛աղաչ - ջ՛ախձի, ւմ ճառ - ւմ ճրռե, թւննաք - թւննքօտել, թառթափ - թառթրփները, շւմ փաթ - շւմ փտրվա, օխճար - օխճրրի, ցօրեն - ցօրնի, ւմ սեղ - ւմ սխի, ւմ վել - ւմ վլի, հավել - հավլընալ, հիրես - հիրսի, ւմ դվեզ - ւմ դվրզի, հրմեն - հրմընի, հառչ - հառչի, գ՛օմեշ - գ՛օմշի, կօլոն - կօլնել, բ՛օլոր - բ՛օլրրել, ժողօվ - ժողվել, կօտոշ - կօտրշխրրել, սւմ պոն - սւմ բնի և այլն). մի բան, որ Արարատյան բարբառին հատուկ չէ:

Ըստ բաղաձայնական հատկանիշների՝ համեմատվող բարբառներն ունեն հետևյալ տարբերությունները.

1(16). Ի տարբերություն Արարատյան բարբառի՝ Բայազետի բարբառը գրաբարյան հ-ի դիմաց ունի իս (հաւ - իսավ, հաց - իսաց, բահ - բ՛ախ, գահ - գ՛ախ, պահել - պւս խել). այս հատկանիշով Բայազետի

<sup>15</sup> Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 65, 77 - 78:

բարբառը նմանվում է Պարսկահայքի և Վասպուրականի բարբառներին:

2(17). Ի տարբերություն Բայազետի բարբառի՝ Արարատյան բարբառին բնորոշ է բառասկզբում (ո-ից առաջ) հ-ի դիմաց ֆ հնչյունի հանդես գալը (հոդ - ֆօդ):

3(18). Արարատյան բարբառին հատուկ է բառասկզբում ի-ի դիմաց տարնմանական հ-ի հանդես գալը, եթե բառի մեջ առկա է հաջորդող դ (օր.՝ խադ - հադ, խադալ - հադալ, խադոդ - հավօդ). Բայազետի բարբառում այս երևույթը չկա:

4(8). Եթե Արարատյան բարբառին հատուկ են քմայնացած հետնալեզվայինները (օր.՝ գիինի, քիր, կիին), ապա Բայազետի բարբառն այդպիսիք չունի (չնայած Գ. Ջահուկյանը հակառակ տվյալ է արձանագրում<sup>16</sup>):

5(14). Բայազետի բարբառում բառամիջի հ - ի դիմաց որպես կանոն առկա է յ<sup>17</sup> (օր.՝ սահման - սւսյման, ջահել - ջսսյէլ, դահլիճ - դ'այլիճ, զահլա - զսսյլս, թագուհի - թաքույի, պահեստ - պսյեստ, փահլսան - փսսյէլվան). Արարատյան բարբառն այս իրողությունը չունի:

6. Արարատյան բարբառում օտար բառերի սկզբում հանդես եկող դ շփականի դիմաց Բայազետի բարբառն ունի կ հպական (դարիբ - կսսրիբ, դագ - կսս գ, դավուրմա - կսս վուրմա, դսմաթ - կրսսսսթ, Ղազար - Կսսզսսր, դալբ - կսսլբ, դութի - կութի): Ի դեպ, այս հատկանիշն ունի նաև Վանի բարբառը<sup>18</sup>:

Արարատյան և Բայազետի բարբառներն անվան ու դերանվան ձևաբանական փոփոխությունների համակարգում հանդես են բերում հետևյալ առանձնահատկությունները.

1(64). Ի տարբերություն ոչ միայն Արարատյան, այլ նաև ում ճյուղի բոլոր բարբառների՝ Բայազետի բարբառը ներգոյական հոլով չունի և այդ հոլովական իմաստը կապային կառույցից բացի (գ'ըրքի մէջը) արտահայտում է նաև հայցականով (օր.՝ Էնի մրկա քաղաքն ա. Հերէկ դըբոցն էր քրնէ. Հէօր գ'եղը խառնիս կսս)<sup>19</sup>:

2. Բայազետի բարբառն ունի ա արտաքին հոլովում, որին ենթարկվում են հատուկ տեղանունները (Կսսվսսա, Հերէվնա, Սէվանա, Գառնիյա, Դիլիջանա, Մսս ոտունա), ինչպես նաև որոշ հասարակ անուններ

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>17</sup> Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ համարում է, որ Բայազետի բարբառն այս հատկանիշը չունի (էջ 47):

<sup>18</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952, էջ 70:

<sup>19</sup> Այս իրողությունը լեզվաբանները չեն նկատել, ինչի արդյունքում Գ. Ջահուկյանը փաստում է Բայազետի բարբառում ներգոյական հոլովի առկայություն (տե՛ս Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 96):

(թունդրրա, ս խճրկա, հոռթրկա, կրնգա, բ'անակա). Արարատյան բարբառը նման հոլովում չունի:

3 (59). Թե՛ Արարատյան և թե՛ Բայազետի բարբառներն ունեն ց-ով բացառական, սակայն Բայազետի բարբառը հատուկ տեղանունների դեպքում ունի ա - ով բացառական (Հերեվնա - Երևանից), իսկ ժամանակի, տեղի անունների, ինչպես նաև մի շարք այլ դեպքերում հանդես են գալիս նաև է - ով բացառականի ձևեր (հառավորնէ, հերեզվրնէ, հիրկըվորէ, մրկավնէ, գ'իշերվորէ, ս շնանէ, հէքուցվրնէ, օրէ, գ'ախէն, տրնէ, դրոնէն, ընձնէ, քեզնէ, մըչէն, դ'ըսէն, տրկէն, գ'ըլխէ, վոտէն, մօտէն, քրթէն, բ'էրնէն, ձ'եռէ վոտէ, մրտէն):

4. Արարատյան բարբառում որոշյալ հոդ կարող են ստանալ բոլոր հոլովները՝ սեռականից բացի, մինչդեռ Բայազետի բարբառում որոշյալ հոդ ստանում են ուղղականը, տրականը և հայցականը:

5(65). Բայազետի բարբառում անձնական դերանունները տրական և հայցական հոլովներում ունեն բառավերջի ի (ընձի, քեզի, մեզի, ձ'եզի). Արարատյան բարբառի անձնական դերանուններն այդ ի-ն չունեն:

6(66). Բայազետի բարբառում գործածական են անձնական և ցուցական դերանունների՝ իկ հավելվածով ձևեր (ընձիկ, քեզիկ, մեզիկ, ձ'եզիկ, էսիկ, էտիկ, էնիկ), ինչպիսիք անծանոթ են Արարատյան բարբառին:

7. Բայազետի բարբառում գործածական են անձնական դերանվան տրական, հայցական հոլովաձևեր՝ առանց բառավերջի գ հնչյունի (քե, մե, ձ'ե<sup>20</sup>). Արարատյան բարբառում նման ձևեր չկան:

8. Արարատյան բարբառն ունի սա, դա, նա, էս, էդ, էն (այս, այդ այն) դերանուններ, որոնց դիմաց Բայազետի բարբառն ունի էսի, էտի, էնի (սա, դա, նա) և էս, էտ, էն (այս, այդ, այն) ձևեր, ընդ որում՝ եթե Արարատյան բարբառում բոլոր ձևերն էլ հոլովվում են, ապա Բայազետի բարբառի էս, էտ, էն դերանունները, գրական հայերենի այս, այդ, այն դերանունների պես, չեն հոլովվում:

9(75). Բայազետի բարբառում հանդիպում է ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառություն (կ ս տունը, ձ'ինը), ինչը Արարատյան բարբառում չի հանդիպում:

Արարատյան և Բայազետի բարբառները միմյանցից տարբերվում են բայական հետևյալ հատկանիշներով.

1. Արարատյան բարբառում բայն ունի երեք խոնարհում՝ Ե, Ա, Ի<sup>21</sup>, իսկ Բայազետի բարբառում՝ երկու խոնարհում՝ Ե, Ա:

<sup>20</sup> Վերջին երկուսը՝ ոչ բոլոր խոսվածքներում:

<sup>21</sup> Տե՛ս Ա. Ղ ա ր ի բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 225, Ա. Գ ր ի գ ո թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 216:

2. Արարատյան բարբառն ունի չ ածանցով բայեր (թռչիլ, հանգչիլ, ուռչիլ, փախչիլ, կորչիլ), մինչդեռ Բայազետի բարբառում այդ ածանցի դիմաց առկա է ն կամ ոչինչ (թռնել, հանքել, ուռել, փախնել, կուրել):

3. Ի տարբերություն գրական արևելահայերենի և Բայազետի բարբառի՝ Արարատյան բարբառում անորոշ դերբայը բայական կիրառությամբ մասնակցում է եղանակային ձևերի կազմությանը՝ բաղադրելով հարկադրական (ուտիլ պտեմ – ուտիլ պտեի), ենթադրական եղանակների (ուտիլ չեմ – ուտիլ չեի), ինչպես նաև արգելական հրամայականի ձևեր (ուտիլ մի – ուտիլ մեք)<sup>22</sup>:

4(83). Եթե Արարատյան բարբառն ունի իս վերջավորությամբ համակատար դերբայ<sup>23</sup>, որը գալ, լալ, տալ բայերի դեպքում մասնակցում է ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմությանը, ապա Բայազետի բարբառն այդ դերբայը չունի, իսկ գալ, լալ, տալ բայերի դեպքում ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են գ՛ալում, լա0լում, տ ան լում ձևերով:

5. Բայազետի բարբառը, ի տարբերություն Արարատյան բարբառի, չունի ապառնի դերբայ:

6(85). Եթե Արարատյան բարբառում վաղակատար դերբայն ունի ել վերջավորություն, ապա Բայազետի բարբառում այդ դերբայի վերջավորությունն է եր (գ՛րբեր, կ ան ոթացեր):

7(86). Բայազետի բարբառում հարակատար դերբայի վերջավորությունն է ուկ (խըմուկ, քընուկ, գ՛ըրուկ, կ ան ոթացուկ)՝ Արարատյան բարբառի ած-ի դիմաց:

8(87). Արարատյան բարբառում Ե խոնարհման պարզ բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի և եզակի հրամայականի վերջավորությունն է ի (աշխատի, աշխատի՛), իսկ Բայազետի բարբառում՝ ա (ան շխատա, ան շխատա՛, գ՛ըրա, գ՛ըրա՛):

9(95). Բայազետի բարբառին հատուկ է Ե խոնարհման պարզ բայերի ոչ ցոյական հիմքով անցյալ կատարյալը (գ՛ըրի, գ՛ըրիբ, յերքիբ, յերքիբ, նրկարի, նրկարիբ), ինչը բնորոշ չէ Արարատյան բարբառին<sup>24</sup>:

10. Բայազետի բարբառում, ի տարբերություն Արարատյան բարբառի, անցյալ կատարյալում բայի սեռը Ե խոնարհման պարզ, բազմապատկական ու կրավորական ածանց ունեցող բայերի դեպքում արտահայտվում է նաև համապատասխան վերջավորություններով. օրինակ՝ թըռչի (թըռչեցի) – թըռչա (թըռչվեցի), գ՛ըրի (գրեցի) – գ՛ըրվա (գրվե-

<sup>22</sup> Մ. Ա ս ա տ ր յ ա ն. Արևելյան գրական լեզվի և Արարատյան բարբառի ձևաբանական համակարգերի փոխհարաբերությունները. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 2, էջ 125:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 125 – 126:

<sup>24</sup> Գ. Ջահուկյանն այս հատկանիշը Բայազետի բարբառին չի վերագրում (տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշիւ., էջ 116):

ցի), կրտրոտի (կտրտեցի) – կրտրոտըվա (կտրտվեցի՝ շատ չարչարվեցի), մըրոտի (մըրտեցի)-մըրոտա (մըրտվեցի) և այլն:

11(97). Արարատյան բարբառում տարածված է ժխտական մասնիկների հետադաս գործածություն (ջնջվիլ չի, ուտի՛լ մի, գրե՛ս ոչ), ինչը Բայազետի բարբառում բացառված է:

12 (98). Բայազետի բարբառում վերլուծական ժամանակաձևի օժանդակ բայը կարող է կրկնվել (Յես ես գ՛ըրէր ես. Յես չեմ գ՛ըրէր եմ). Արարատյան բարբառը այս հատկանիշը չունի:

Արարատյան և Բայազետի բարբառների զուգաբանական (ըստ բարբառային ընդհանուր հատկանիշների) համեմատությունը, այսպիսով, ցույց է տալիս, որ բարբառային այդ միավորները միմյանցից տարբերվում են առնվազն 37 բարբառային հատկանիշներով (ձայնավորական՝ 10, բաղաձայնական՝ 6, անվանական՝ 9, բայական՝ 12): Համեմատվող բարբառներում ձայնավորական տարբերություններն ավելի շատ են, քան բաղաձայնականները, և բայական տարբերությունները գերազանցում են անվանականներին:

Հնչյունաբանական ու ձևաբանական բերված և մի շարք այլ տարբերություններ ուղեկցվում են բառապաշարային և շարահյուսական զանազանություններով, որոնք, հասկանալի է, Գ. Ջահուկյանի հարյուր հատկանիշներում ընդգրկված չեն: Բերենք բառապաշարային զանազանությունների երկու խումբ.

Արարատյան բ.	Բայազետի բ.	Արարատյան բ.	Բայազետի բ.
անց կենալ	հընցընել	շլինք	վիգ
մտիկ անել	հիշկալ	հրես	հէսա
կախ անել	կ <b>ս</b> խել	ցեխ	տիլ
բաց անել	բ՛ացել	ճիտ	վիգ
վեր կենալ	հըլնել	ածել	լցել
պար գալ	պ <b>ս</b> բել	շվաք	խօվ
պաչ անել	պ <b>ս</b> չել	սիրուն	խօրօտ
յեռ գալ	յեռալ	կամաց - կամաց	հուշիկ - հուշիկ
շուռ տալ	շըռձել	թեգ	շուտ
լաց ըլել	լ <b>ս</b> լ	ինչպես	իմալ
տափ կենալ	տ <b>ս</b> փել	կտուր	տ <b>ս</b> նիս
վեր ածել	թափել	կողմ	յան
փուլ գալ	բ՛ըլել	մեծ	ջ՛ոչ
միտք անել	մըտկել	ծեծել	տըփել
վեր գալ	իջնել	մի քիչ	մէշու
գոռ անել	գօռել	խոտել	գրկել
թիք ընկնել	պ <b>ս</b> բկել	երէխա	ճիժ
վեր ունել	վէրցել	խըլել ձեռից	<b>ս</b> ոնել
հազիր անել	հ <b>ս</b> զըրել	խի	հընչի



տված	ւ նոթի	սատկել	խատել
կոնատակ	հունթ	դեռ	լը
վադուց	շուտուց	արա	գւ

(դիմելաբառ)

Բառապաշարային տարբերությունների առաջին սյունակի խմբի դիտարկումը ցույց է տալիս, որ Արարատյան բարբառը, Բայազետի բարբառի համեմատությամբ, ավելի է հակված գործածելու բայական հարադրություններ, իսկ երկրորդ խմբում երևում են հիմնական բառաֆոնդը ներկայացնող բառերի տարբերություններ, որոնք պայմանավորված չեն կենցաղով, բնական պայմաններով կամ զբաղվածության տեսակով, ընդ որում՝ նման տարբերությունները բավականին շատ են:

Բառապաշարի ավելի հանգամանալից քննության դեպքում կարելի է ցույց տալ նաև դարձվածային միավորների տարբերություններ (օր.՝ Անունը տուր, հացը քցա /Մ/ - Շւ ն նւ նուն տու, փէդն նւ ռ ձ'երըտ /Բ/. Գիլի բերնից պրծանք, արջի ձեռն ընգանք /Մ/ - Անձրրնից փախանք, հրնգանք կւ րկրթի տւ կ /Բ/. Դուռդ պինդ փակիր, վօր հարեվանիդ գօղ չրբոնէս /Մ/ - Հւշկրտ ն բրընքիտ վրըէն պւ խա, հարեվնիտ էլ գող մի ն սա /Բ/. Սիրտը վրկայել /Մ/ - Սըռտից տալ /Բ/. Գ'ըլխին կրակ վառել /Մ/ - Գ'ըլխին կրրակ թափել /Բ/. Մի աշկօլ նայել /Մ/ - Ընձի մէ հւշկօ մ' էս հիշկում /Բ/. Սըռտից արին գ'ընալ /Մ/ - Փօրից ն րուն էթալ /Բ/. Նկատելի են նաև բառիմաստային տարբերություններ. օրինակ՝ Արարատյան բարբառում ճաշ բառը ունի նաև կեսօր իմաստը (Օրը ճաշ դառավ. ճաշ որ թեքվեց, արևը մի քիչ կախ ընկավ. ճաշվա շոքն անց էր կացել), իսկ Բայազետի բարբառում այն նշանակում է միայն ապուր (Մէ ն ման ճւ շ լից՝ ուտեմ). Արարատյան բարբառում խալխ բառը ունի ժողովուրդ, ամբոխ իմաստը, մինչդեռ Բայազետի բարբառում այդ բառն ունի խըլղ ձևը և ուրիշ իմաստը:

Բավականին շատ են բառերի ձևերի և բառաձևերի մասնավոր տարբերությունները (որոնք պայմանավորված չեն բարբառների հնչյունաբանական յուրահատկություններով).

Արարատյան բ.	Բայազետի բ.	Արարատյան բ.	Բայազետի բ.
դառավ	դ'առցավ	քու	քօ
անում	ւ նուն	մի, մեկ (անորոշ դեր.)	մէ
մին (թվական)	մէկ	պրոռավել	պւ նվընալ
ասեց	ւ սավ	ով	վոն, վորը
ում	վի, վիր	գիտեմ	գիդում եմ
գնացին	գ'ացին	չի ուտում	չուտում
ուտացրիք	կէրցըրիք	մօդանալ	մօտկընալ

վախիլ	վախենալ	մրդաձել	մրտկել
մի ուտի	մի կե	ժաժ գալ	հիրար գալ
խելքը քցել	խելքը թըռցրնել		

Արարատյան և Բայազետի բարբառների շարահյուսական տարբերությունները համեմատաբար սակավ են: Առավել նկատելի յուրահատկություններից բերենք մի երկուսը: Այսպես, եթե Արարատյան բարբառում խնդիր և պարագա լրացումները հաճախ կարող են հաջորդել ստորոգյալին, ապա Բայազետի բարբառում բայական լրացումները սովորաբար նախորդում են ստորոգյալին (օր.՝ Կանչում ա հարսին /Մ/ - Խառսին կ *ս* նչում /Բ/. Աբրըմ էր մենակ /Մ/ - Միյնանկ էր *ս* բրում /Բ/. Մառթիք դ'ազաղը տանըմ ին առվի լըպըրծուն քարերի վրով /Մ/ - Մ *ս* որթիք դազաղը հառվի լըժիկ քարերի վըրվով ին տ *ս* նում /Բ/. Բ *ն*չ անեմ քեզ մօտ /Մ/ - Քօ կուշուն ի *ն*չ անեմ /Բ/): Արարատյան բարբառում նպատակի պարագան հաճախ արտահայտվում է անորոշ դերբայի տրականով, Բայազետի բարբառում նման դեպքերում գործածական է ըղձական եղանակի բայաձև (օր.՝ Պաղրասղվըմ ա էթալու /Մ/ - Պ *ս* դրաստըվում, վոր էթա /Բ/. Վաղարշապատի հարուստներից մեկը վարցըմ ա Ալէքսանին՝ աշնան ցօրենը ցանելու /Մ/ - Վաղառշապ *ս* տա հարրստներից մեկը Ալէքսանին վառձում, վոր *ս* շնան ցօրենը ցանա /Բ/. Նըրան տարան թաղելու /Մ/ - Ընդուն տ *ս* րան՝ թաղեն /Բ/):

Բերված տարբերությունները թույլ են տալիս գնահատել համեմատվող բարբառների լեզվական, համակարգային փոխհարաբերությունները: Բայց եթե նկատի ունենանք, որ լեզվական համակարգի իրական դրսևորումը խոսքն է, ապա հետաքրքրական կարող է լինել նաև բարբառային խոսքերի համեմատությունը:

Բարբառային հատկանիշների որոշումով բարբառների ուսումնասիրությունը պետք չէ ավարտված համարել (հատկապես համեմատական քննության դեպքում), որովհետև այդ հատկանիշները կարող են ունենալ տարբեր ընդգրկում (որոշ հատկանիշներ վերաբերում են նույնատիպ բառերի մեծ խմբի կամ քերականական կարգի դրսևորումներին, այլ հատկանիշներ վերաբերում են սակավաթիվ, երբեմն նույնիսկ մեկ տասնյակի չհասնող բառերին), խոսքում դրանք ունեն տարբեր գործածականություն (դրսևորման մեծ հաճախականություն ունեցող հատկանիշների կողքին կան հատկանիշներ, որոնք կարող են արտահայտվել խիստ հազվադեպ): Ստացվում է, որ դիտարկված և նկարագրված բոլոր հատկանիշները նույն կշիռը չեն կարող ունենալ բարբառները բնութագրելիս և համեմատելիս:

Ինչ վերաբերում է խոսքային մակարդակում բարբառների քննությանը, ապա այս դեպքում, ճիշտ է, բարբառային բոլոր հատկանիշները միաժամանակ չեն կարող դիտարկվել, և բարբառը իր ողջ համակար-

գով ու կառուցվածքով հնարավոր չի լինի ընդգրկել, բայց նման քննությամբ հնարավոր կլինի առանձնացնել և տարբերակել առավել էական ու բնութագրական հատկանիշները, նաև վեր հանել մասնավոր կարգի հնչյունաբանական, ձևաբանական, բառապաշարային յուրահատկությունները, շարահյուսական հատկանիշները, խոսքի կառուցման առանձնահատկությունները: Ակնհայտ է, որ ինչպես որևէ բարբառ դիտարկելիս, այնպես էլ տարբեր բարբառներ համեմատելիս հետազոտությունն ավելի արդյունավետ կարող է լինել, եթե լեզվական քննությունը զուգորդվի խոսքայինով:

Բարբառները համեմատելիս խոսքային մակարդակում քննություն կարելի է կատարել՝ բարբառներից մեկով գրանցված տեքստին (կամ տեքստերին) մյուս բարբառով նույն տեքստի (կամ տեքստերի) թարգմանության զուգադրումով: Հասկանալի է, որ որքան համեմատվող տեքստերը ընդարձակ ու տարաբնույթ լինեն, այնքան ավելի ամբողջական ու հավաստի կլինեն եզրակացությունները: Բայց և պարզ է, որ նման դիտարկումներն անսահմանափակ լինել չեն կարող, և որոշակի ծավալով տեքստերի զուգադրումով կարելի է վեր հանել ընդհանուր օրինաչափությունները:

Իբրև նման քննության օրինակ՝ դիտարկենք Արարատյան բարբառի Էջմիածնի խոսվածքով գրանցված մի փոքրիկ հատված և դրա թարգմանությունը՝ Բայազետի բարբառով:

Արարատյան բարբառ  
(Էջմիածնի խոսվածք)

Օվագը մի ախկատ մառթ էր: Կյանքը անց էր կացրել քարփինջ քրցելով. հողն ու ջ'ուրը ձ'ըրի ին:

Աշնան մի անձրեվօտ օր Օվագը մեռավ: Նըրան տարան թաղելու: Գ'երեզմանի մողի մենձ առվի վրա կարմունջ չըկար: Մառթիք դ'ագաղը տանըմ ին առվի լըպրծուն քարերի վրով: Մէկ էլ բ'ըռնօղնէրի վօտները սօթ տըվէց, դ'ագաղը շուռ էկավ. Օվագն ընգավ ջ'ուրը: Մէկն ասէց.

- Մեռած վախտըն էլ լիսահօրու ուշը ջ'ըրին ու ցըխին ա...<sup>25</sup>

Բայազետի բարբառ

Հօվակը մէ ւն իսկատ մ ւն ոթ էր: Մ ւն դ կյ ւն նքը քաթօրփինջ ս ւն րթէլօվ էր հընցըցըրէ. խողն ու ջ'ուրը ձ'ըրի յին:

Աշնան մէ ւն նձըրն օր Հօվակը մեռավ: Ըտուն տ ւն րան՝ թաղեն: Գ'երեզմընի կըշտի ջ'ոչ հառվի վըրէն կ ւն րմունջ չըկէր: Մ ւն ոթիք դագաղը հառվի լըժիկ քարերի վըրօվ ին տ ւն նում: Մէկ էլ բ'ըռնօղնէրի վոդները թաթլէց, դագաղը շըռձավ, Հօվագն հընգավ ջ'ուրը: Մէգն ւն սավ.

- Մեռուկ գ'ախ էլ օղօրմածիկի ուշկ ու միտկը ջ'ուրն ու տիլն ա...<sup>26</sup>

<sup>25</sup> Ռ. Մ ա ր կ ո ս յ ա ն. Արարատյան բարբառ, Երևան, 1989, էջ 220:

<sup>26</sup> Ընդգծված են բարբառային տարբերություններ պարունակող միավորները:

Համեմատությունից նախ և առաջ երևում է, որ բարբառային տարբերություններ առկա են խոսքի միավորների ճնշող մեծամասնության դեպքում, այսպես՝ Արարատյան բարբառով տեքստի 63 խոսքային միավորներից քառասունութի դիմաց Բայազետի բարբառը ներկայացնող տեքստում առկա են բարբառային տարբերություն պարունակող միավորներ: Մնացած տասնհինգ միավորները, որոնք նույնական են համեմատվող բարբառներում, օժանդակ բայի ձևեր են (էր, ին, ա), շաղկապներ (ու, էլ), նաև լիհիմաստ բառեր (ջ'ուր, ձ'րրի, օր, քարերի, մէկ էլ, բ'ըռնօղների):

Բերված տեքստում արտահայտված բարբառային տարբերությունների բոլոր դեպքերը (առանց խմբավորելու) բաշխվում են հետևյալ կերպ. հնչյունաբանական - 37 (ձայնավորական - 21, բաղաձայնական - 16), ձևաբանական - 5, բառապաշարային - 12, շարահյուսական - 5: Ի դեպ, հաշվարկները կատարելիս հաշվի չենք առնում այն հանգամանքը, որ որոշ դեպքերում բառերը կամ բառաձևերը կրկնվում են. մեզ համար սովյալ դեպքում կարևորվում է լեզվական հատկանիշի դրսևորման հաճախականությունը:

Արարատյան բարբառի նկատմամբ Բայազետի բարբառի ունեցած տարբերությունները բերված հատվածում դրսևորվում են հետևյալ հատկանիշների շրջանակներում:

Ձայնավորական տարբերություններ (21 դեպք).

ա) շրթնայնացած *ս* ձայնավորի առկայություն (10 դեպք),

բ) երկբարբառային *ե* հնչյունի առկայություն (4 դեպք),

գ) երկբարբառային *ո* հնչյունի առկայություն (2 դեպք),

դ) քմային *ս* ձայնավորի առկայություն (1 դեպք),

ե) մասնավոր ձայնավորական տարբերություններ (2 դեպք),

զ) շեշտի հետ կապված հնչյունական տարբերություններ (2 դեպք):

Բաղաձայնական տարբերություններ (16 դեպք).

ա) բառակզբում ձայնավորից առաջ *հ*-ի հավելում (6 դեպք),

բ) տարբերություն բառամիջում ըստ ձայնի և աղմուկի հարաբերության (5 դեպք),

գ) բառակզբում *հ* - ի դիմաց *խ* (1 դեպք),

դ) այլ տարբերություններ (4 դեպք):

Ձևաբանական տարբերություններ (5 դեպք).

ա) բայական (4 դեպք),

բ) անվանական (1 դեպք):

Բառապաշարային տարբերություններ (12 դեպք)<sup>27</sup>.

ա) արմատական (8 դեպք),

բ) բառակազմական (4 դեպք):

<sup>27</sup> Բառապաշարային տարբերություններն իրենց հետ բերում են նաև հնչյունական տարբերություններ, որոնք, սակայն, հաշվի չենք առնում՝ համեմատվող բարբառներից մյուսում իրենց համապատասխանությունները չունենալու պատճառով:

Շարահյուսական տարբերություններ (5 դեպք).

- ա) շարահյուսական (2 դեպք),
- բ) կառուցվածքային (2 դեպք),
- գ) ինդրառական (1 դեպք):

Արարատյան և Բայազետի բարբառների՝ լեզվական և խոսքային մակարդակներում կատարված քննության փաստերի զուգադրումից պարզվում է՝

ա) չնայած երկու բարբառները ավելի շատ ձևաբանական հատկանիշների տարբերություններ ունեն (21), քան հնչյունաբանական (16), սակայն խոսքում շատ ավելի շատ են հնչյունական տարբերությունները (37), քան ձևաբանականները (5):

բ) Երկու բարբառների հնչյունական հիմնական զանազանությունները առաջանում են առաջին հերթին ա, ապա նաև ե, ո ձայնավորների, հ շփականի, հպական ու հպաշփական բաղաձայնների՝ բառամիջում ըստ ձայնի և աղմուկի հարաբերության դրսևորումների տարբերություններով:

գ) Համեմատվող բարբառները ձևաբանական հատկանիշների ավելի շատ տարբերություններ ունեն բայական (12), քան անվանական (9) համակարգում. այդ իրողությունը դրսևորվել է դիտարկվող խոսքում:

դ) Բարբառների բառապաշարային (հատկապես՝ արմատական) տարբերությունները ավելի շատ են, քան շարահյուսականները:

Այսպիսով, եթե բարբառային զուգաբանությունների դիտարկումը թույլ է տալիս վեր հանել համեմատվող բարբառային միավորների ընդհանուր հատկանիշները և տարբերությունները լեզվական մակարդակում, ապա խոսքային համեմատությունը կարող է ցույց տալ, թե որ հատկանիշներն են բարբառային խոսքում առավել գործուն և էական՝ ինչպես տվյալ բարբառը բնութագրելու, այնպես էլ այլ բարբառներից տարբերակելու առումներով: Ըստ այդմ՝ մեր դիտարկած տեքստը թույլ է տալիս եզրակացնել, որ Արարատյան և Բայազետի բարբառները խոսքային մակարդակում միմյանցից ավելի շատ տարբերվում են հնչյունաբանական հատկանիշներով: Ջգալի են նաև բառապաշարային զանազանությունները: Ձևաբանական տարբերությունները զգալիորեն սակավ են, իսկ երկու բարբառների շարահյուսական տարբերությունները ինչպես լեզվական, այնպես էլ խոսքային մակարդակներում ամենաքիչն են: Եվ, թերևս, պատահական չէ, որ երբ Բայազետի բարբառակիրը ձգտում է խոսել Երևանի խոսվածքով, ավելի հեշտությամբ հաղթահարում է ձևաբանական տարբերությունները, իսկ բառապաշարային և հատկապես հնչյունական (առավելապես՝ ձայնավորական) տարբերությունները, այնուամենայնիվ, դեպքերի մեծ մասում իրենց զգալ են տալիս:

Ի վերջո, որևէ բարբառի համար լեզվական բոլոր հատկանիշներն էլ էական ու բնութագրական են, և տարբեր բարբառների փոխհարաբերությունները որոշվում են հենց դրանց զուգադրումով ու համեմատությամբ: Միաժամանակ, այս բարբառներով մի շարք տարաբնույթ տեքստերի համեմատական դիտարկումը հնարավորություն կտա առանձնացնել հատկանիշների այն խումբը, որոնք տվյալ բարբառային խոսքին ավելի բնորոշ են, և որոնցով էլ առաջին հերթին առանձնանում է տվյալ բարբառը:

*ВИКТОР КАТВАЛЯН*

Р е з ю м е

Արարատյան և Բայազետի դիալեկտները տարբերվում են ըստ 37 դիալեկտային նշանների: Երկու դիալեկտներում էլ տարբերությունները ավելի շատ են վերաբերում ձայնայիններին, քան ձայնաստորագրողներին: Բայազետյան դիալեկտում տարբերությունները ավելի շատ են վերաբերում բայերին, քան անվանականներին: Երկու դիալեկտներում էլ կան տարբերություններ բառային և սինտակսիկական մակարդակներում: Երկու դիալեկտներում էլ ձայնային տարբերությունները ավելի շատ են արտահայտում դիալեկտային տարբերությունները, քան բառային տարբերությունները:

INTERRELATIONSHIPS BETWEEN THE DIALECTS OF ARARAT AND BAYAZET

*VICTOR KATVALYAN*

S u m m a r y

The dialects of Ararat and Bayazet differ from each other in 37 dialectical features. In the dialects compared, there are more differences between the vowels than between the consonants, and the differences of verbs outnumber the differences of nominals. There are also differences between the word-stock and syntax. In the communicative level differences in sounds are more distinguishing for dialects than those in word-stock.